

յած քիչ չեն նաև թխահերները: Մյուս ազգատոհմերում գերակշռում են թխահերները: .

5. Արանք սովորաբար խուսափում են խառնամուսուկությունից, բայց վերջերս այլազգիների հետ ամուսնանալու մի քանի դեպք գրանցվել է: Ընտանիքները բազմաճյուղ են, հաճախ ունենում են 5-7, երբեմն՝ 10 երեխա: Շատ մեծ նշանակություն են տալիս ավագության կարգին՝ բուր հարցերը լուծում են ընտանիքի գլխավորները կամ ավագները:

Խիստ մաքրակենցաղ են: Թեև օտարներից խուսափում են, բայց շատ հյուրասեր են, օգտագործում են հայկական ավանդական մաշտոսակներ:

6. Համշենցիների այս հատվածը բնութագրվում է իբրև քաջ, աշխատասեր, սակավազետ, լրջախոհ, զգուշավոր, ինքնամոկոփ և բարոյական շատ խիստ չափանիշներով առաջնորդվող: Ընդհանուր առմամբ կրոնամոլ չեն, եթե նույնիսկ մզկիթ կա, ապա այցելում են միայն 50-60-ից բարձր տարիքի տղամարդիկ:

7. Հիանալի գիտեն նախնյաց պարերը: Նվագում են Համշենի քեմենչե: Բառավոր ստեղծագործության մեջ հետևապես առատ են մանիներն ու առանձնացվածքները: Այս և բանահյուսական մյուս ժանրերի նյութերը բազմաթիվ գուզահեղուկ ունեն թե առհասարակ համշենահայերի, թե Հայաստանի արևելյան ու արևմտյան հատվածներում գրառված նյութերի հետ և հաճախ առավել կամ նվազ ամբողջական տարբերակներ են:

8. Կրոնափոխ համշենահայերը խոսում են Համշենի բարբառի երկու՝ արդիեցիների և դուրցեվանցիների խոսվածքներով: Բուն Համշենի և թերևս մեր մյուս բարբառների համեմատության մեջ քիչ են օտարամուտ բառերը:

9. Չնայած ուսումնասենչությունն ու արտակարգ ընդունակություններին, ծնողները զգուշանում են զավակներին օտար վայրեր ուղարկել՝ բարձրագույն կրթության: Սակայն, հետևապես վերջին տասնամյակում, շուրջ 20 հոգի ԲՈՒՀ է ավարտել, մեծ մասամբ՝ Ֆրոնկեոմ: Կիրգիզիայում հաճախում են կիրգիզական, իսկ Ղազախստանում և Կրասնոդարի երկրամասում՝ ռուսական դպրոցներ: Մեծ մասը, բացի հայերենի իր բարբառից, տիրապետում է մի քանի լեզվի՝ ռուսերեն, կիրգիզերեն, ղազախերեն, տաջիկերեն, թուրքերեն և այլն:

Վ.Լ.ՎԱՐԴԱՆՑԱՆ

ՀԳԳ

ԳՈՐԳԻ ԵՎԳՈՒՄԸ, ՆԱԽՆԱԿԱՆ ՏԻՊԵՐԸ ԵՎ ՏԱՐԱԾՈՒՄԸ

/քննական հայացք/

Գորգազիտությունը չի լուծել գորգի ծագման հարցը: Դեռևս տի-

րապետող է Կ.Էրզրմանի դրույթը, քստ որի գորգի ծագումը և տարածու-
մը կապվում է քոչվորների հետ՝ հանձին թուրք-սելջուկների / Kurt
Erdman, The History of Early Turkish Carpet, London, 1977/:
Նրա տեսակետը, որպես հակադիտական, այժմ մերժել են կարոլ Գոմբո-
շո /Kardy Gombos, Die Mythe der seldschuk Teppich, Budapest,
1980/ և Ֆոլկմար Գանցհորն /Ֆ.Ганцхорн, Христианско-
восточный ковер - один из аспектов армянского искусства. "Че-
твертый международный симпозиум по армянскому искусству. Те-
зисы докладов", Е., 1985/: Վերջինս քնդուսում է գորգի բացա-
ռապես հայկական Ֆենոմենը, ^{անակա}սակայն, բուն ծագման ապացույցները
առկու:

Խնդրո առարկայի համակողմանի քննությունը հայ ժողովրդի
պատմության /ևս գաղթօջախների/, ազգագրության, լեզվի /տերմինաբա-
նության/, հնագիտության, ծարտարապետության, զարդարվեստի, տարա-
զի, խեցեգործության, ժայռապատկերների և այլնայլ բազմաթիվ ու
բազմազան քննադատների նյութերի, ինչպես նաև այլ ժողովուրդնե-
րի պատմամշակութային առնչությունների Ֆոնի վրա թույլ է տալիս
ըմբռնելու գորգի բովանդակությունը, կոհանու ծագման նախադրյալ-
ները, մատնագույց անելու մշակութային մարզը, մի քանի նախնական
տիպերը, զատորոշելու զարգացման փուլերը և տարածման հանգամանե-
րը:

Համահոտակի այսպիսիք են հայեցակետերը, որոնց համադրմամբ
հանգել ենք հետևյալ արդյունքներին:

1. Հարթ գեոմի վրա մարդը նախապես զծագրել է արտադրական,
սոցիալական, տիեզերեկան ըմբռնումներ պարունակող նշաններ, ո-
րոնք դարձել են անձնոմխելի, սրբազան, իսկ արդեն, ավանդության
ուժի համաձայն, մոգական՝ համայնքի, տոհմի, ցեղի համար: Այդ
խորհրդանշանները մարդու արտադրական գործունեության բարդացման
ու խորացման մանապարհին պատկերվել են գունավոր ավազներով ու
խմբաբարերով /խմանկարի ծնունդը/: Կամի /թաղիք/, գործվածքի
/բուսական կամ կենդանական թելերից՝ միևնույն է/ հայտնագործու-
մից հետո, այդ խորհրդանշաններն աստիճանաբար /պարզից դեպի բար-
դը/ փոխարկվել են նրա վրա, կրելով նյութին բնորոշ տեսնիկական
ձևափոխություններ՝ մակզարդ /ապլիկացիա/, դաշվածք և այլն: Ավե-
լի կայուն դարձնելու համար խորհրդանշանները հյուսվել են գործ-
վածքի հետ /պարզագույն կապերաի ծնունդը՝ մեզար, ջեջիմ/: Հավա-
նաբար, դրանց գուգահո, գուցե և ավելի վաղ, ծագել են բանված-
քը, ասեղնահյուսված, ,կապերտները,, : Անմիջաբար գործվածքի հետ

հյուսելու պահանջը ծնել է նաև /բարդացման աստիճանականություն/ երկերես, շուլիալ, թեք և ուղիղ օղմիտ, ծոպավոր կամ ծոպերես տիս-նիկայով կապերտներ: Հայաստանի տարածքում այդ տիսնիկայով կապերտ-ները ստեղծվել են ոչ ուշ, քան մ.թ.ա. III հազ.: Կտավի տիսնիկայի մեջ հանգույցի ներմուծմամբ ծնունդ է առնում հանգուցավոր, այսինք-քցն՝ խավավոր գորգը, հավանաբար, ոչ ուշ, քան մ.թ.ա. II հազ.: Հայոց մեջ փոքրներից բացի, եղել է նաև կարգեօրի և գորգի տիսնիկա-յով գործված հագուստ, պահպանելով նաև պաշտամունքային և սրբազան նշանակությունը:

2. Կապերտ-գորգն ի սկզբանե կապված է եղել կնոջ պաշտամունքի հետ, արտացոլել է մայրիշխանության ժամանակների քմբոնումները՝ տիեզերական և սոցիալական աշխարհայեցողությունը, պատկերել է պետ-դաբերության, առատության, հավերժության, ապահովության, ցեղակցու-թյան, տոտեմական զաղափարներ: Գորգ-կապերտը հետզհետե դառնում է տհամի, ցեղի, արքունի տան, զերդաստանի, քնտանիքի տարբերակներ, ինչպես գորդյան հանգույց-խորհրդանշանները: Գունավոր ավազակերտ-գորգի, խմանկար-գորգի պահպանության համար կառուցված նախնական տաճարների ամբողջ քմբոնումներն ընկալած գորգն ինքնին դիտվում է որպես տաճարի հոմանիշ /գորգ-խորան-շարժական տաճար/ և նրա վրա կատարվել են այն միևնույն գործողությունները, որոնք մտնում էին տաճարական ծիսակարգի մեջ: Այս իսկ քմբոնումներով, գորգերի նախնական տիպերն են՝ ,,Խորանագորգ,, ,,Աղթագորգ,, ,, Խաչ-բուրդ,, ,, Խաչագորգ,, ,, ,,Սափորագորգ,, ,, ,,Կենաց գոր-գը,, կամ ,,Ծառագորգ,, ,, ,,Պուշկագորգ,, ,, ,,Կենդանագորգ,, ,, ,,Ցանցագորգ,, ,, ,,Վարսանդագորգ,, ,, ,,Որսագորգ,, ,, ,,Գորդ-յան-հանգույց,, գորգը, ,,Օձագորգ,, /ժող՝ ,,Չկապոր,, /, ,,Վիշապագորգ,, ևն: Այսպիսով, նախնական գորգերը բացառապես ի-մասաային խորհրդանշաններ կրող են եղել, սեմանտիկ գորգեր՝ ս-վանդական գորգեր, սրբազան գորգեր, պաշտամունքային գորգեր, նշա-նագորգեր /զրականության մեջ դրանք կոչվում են ,,երկրաչափական,, գորգեր/: Գորգերի աշխարհիկանացման ցանապարհին /բացառապես արտա-քին շուկայի պատճառով/ սկսած հավանաբար VIII դ., արաբական աշ-խարհակալության հետևանքով, մշակվում է ,,ծաղկագորգերի,, ,,այ-սինքն՝ բացառապես ղեկորատիվ գորգերի, տեսակը, որը հիմք է դնում հետագայի, այսպես կոչված, ,,Աբասյան գորգերին,,:

3. Որպես երկրագործական մշակույթի արվեստ, գորգի, Ֆալու-սի, գորդյան հանգույցի, խաչքարի զաղափարական առանցքը մեռնող և

հանող հատիկն է:

4. Գորգ-գորգագործության տերմինաբանությունը որպես գորգի հայ-րենիք ակարկում է Հայաստանը /գորգի հոմանիշներ՝ կուրկ/աս/, քուրք գորգի հիմնական տարածքը՝ դաշտ, հող, գետին, տափ, պորտ ևն/: Գորգի և կապերտի գործվածքի տեխնիկայի հետ միասին մի շարք տերմիններ հայերենից անցել են սեմական, իրանական, իբերական, լատինական, լատինական, ռոմանո-գերմանական, սլավոնական, քյուրքական լեզուներին /տափ-տապաստակ՝ tapis, teppich, tabasta, tappeto ևն. կապ-կապա-կապերտ-կարպետ՝ aba, akaba, gyaba, capot, carpet. կամ /թաղիք՝ qecha. փալաս՝ palas. դիպակ՝ diba, dibag. ջեջիմ՝ jejim ևն/:

5. Որպես գորգի հայրենիք հնագույն զրավոր աղբյուրները մատնացույց են անում Հայաստանը /մթա V դ., մթ I, V դդ./ և Բաբելոնը /մթա V դ./, հնագիտությունը՝ Հայաստանը /մթա XIV-IX դդ., VIII դ., մթ IV դ./, Ալթայը /մթա VI դ., V դ./, Եգիպտոսը /մթ IV դ./, գործիքները՝ Հայաստանը /տորք, իլիկ, կտուտ՝ մթա III - I հազ./, Եգիպտոսը /տորք՝ մթա III հազ./, զարդարվեստը և հորինվածքը՝ Հայաստանը /մթա III - I հազ./ և Միջին Ասիան /զարդարվեստը՝ մթա IV հազ., մթա I հազ./:

6. Աղբյուրների քննությամբ հաստատվում է նաև, որ առավելապես հայերն են եղել գորգագործության տարածողները /Բաբելոն, Եգիպտոս, Եթովպիա, Բյուզանդիա, Պարսկաստան, Իրաք, Սիրիա, Լիբանոս, Յուդեա, Միջին Ասիա, Աֆղանստան, Հնդկաստան, Չինաստան, Արևելյան և Արևմտյան Եվրոպա/: Հնագույն գորգավաճառները և գորգ նորոգողները դարձյալ եղել են հայերը:

Այսպիսով, փաստերի օբյեկտիվ քննությամբ հերքվում է Կ.Էրզմանի դրույթը: Մեր համոզմամբ հաստատվում է այն տեսակետը, ըստ որի գորգարվեստը հնագույն զարգացած երկրագործություն /մթա VIII-VI հազ./ ուստիև քաղաքակրթություն ունեցող, հայկական մշակութային մարզի, /Ֆ.Գանսգրորն/ արգասիք է: Մի մշակույթ, որի միակ կենդանի կրողը հնագույն ժամանակներից հայ ժողովուրդն է:

Դ.Ս.ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ՀԱԻ

ՀԱՅՈՑ ԲՆԱԿԱՐԱՆԱՑԻՆ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԱՑԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ

ՃՈՒԳՈՐԴՎԱԾ ՀԵՏԱՃՈՏՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅԱՆ ԱԳՅԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Գիտություն կոչումն է /ինչպես հայտնի է/ մանրագին հետազո-